

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2017 թվականի մարտի 3-ի
N 19 որոշմամբ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության
«Քիմիական արտադրանքի անվտանգության մասին»

(ԵԱՏՄ ՏԿ 041/2017)

Սույն տեխնիկական կանոնակարգը մշակվել է Եվրասիական տնտեսական միության 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով Գլոբալ մակարդակով համաձայնեցված՝ քիմիական արտադրանքի վտանգավորության դասակարգման և մակնշման համակարգը (ԳՆՀ) (2011 թվական)՝ հետևյալը սահմանելու համար.

մարդու առողջության և շրջակա միջավայրի համար քիմիական նյութերի և խառնուրդների վտանգավորության, ինչպես նաև դրանց ֆիզիկաքիմիական հատկություններով պայմանավորված վտանգավորության դասակարգման չափանիշները,

տեղեկացման համակարգի տարրերը, որոնք ներառում են մակնշմանը և անվտանգության անձնագրին ներկայացվող պահանջները:

Սույն տեխնիկական կանոնակարգը մշակվել է քիմիական արտադրանքի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային տարածքում կիրառման և կատարման համար պարտադիր միասնական պահանջներ սահմանելու, Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելիս դրա ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով:

I. Կիրառման ոլորտը

1. Սույն տեխնիկական կանոնակարգն ընդունվել է մարդու կյանքի և առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների կյանքի և առողջության

պաշտպանության, սպառողներին (ծեռքբերողներին) մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու նպատակով:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող քիմիական արտադրանքի նկատմամբ Միության մաքսային տարածքում կիրառման և կատարման համար պարտադիր միասնական պահանջները, ինչպես նաև այդ արտադրանքի համապատասխանության գնահատման կանոնները և ձևերը, նույնականացման կանոնները, եզրութաբանությանը, մականշվածքին և դրա զետեղման կանոններին ներկայացվող պահանջները:

Քիմիական արտադրանքի արտադրության, պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման և օգտահանման (վերամշակման) գործընթացներին ներկայացվող պահանջները սահմանվում են Միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերում, որոնց գործողությունը տարածվում է քիմիական արտադրանքի առանձին տեսակների վրա:

3. Սույն տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող ամբողջ քիմիական արտադրանքի վրա՝ բացառությամբ N 1 հավելվածի համաձայն ցանկով նախատեսված արտադրանքի:

Քիմիական արտադրանքի առանձին տեսակների նկատմամբ կոնկրետ պահանջներ սահմանող՝ Միության (Մաքսային միության) այլ տեխնիկական կանոնակարգերի կարգավորման օբյեկտ համարվող քիմիական արտադրանքի այդ ձևերի նկատմամբ սույն տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է քիմիական արտադրանքի դասակարգմանը, նախազգուշական մակնշմանը և անվտանգության անձնագրին ներկայացվող պահանջներին վերաբերող մասով, եթե նշված պահանջները սահմանված չեն Միության (Մաքսային միության) այլ տեխնիկական կանոնակարգերով:

II. Հիմնական հասկացությունները

4. Սույն տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակներով օգտագործվում են հետևյալ հասկացությունները և դրանց սահմանումները՝

կենսակուտակում՝ կենսաբանական օբյեկտներում քիմիական նյութերի

կուտակվելու ունակությունը.

պայթուցիկ քիմիական արտադրանք՝ պինդ կամ հեղուկ քիմիական արտադրանք, որն ինքնին ունակ է այն ջերմաստիճանով և ճնշմամբ և այնպիսի արագությամբ գազերի անջատմամբ քիմիական ռեակցիա առաջացնելու, որ դա հանգեցնում է շրջապատի առարկաների վնասման.

բոցավառվող հեղուկ՝ հեղուկ, որի բոցավառման ջերմաստիճանը 93 °C-ից բարձր չէ.

բոցավառվող քիմիական արտադրանք՝ արտադրանք՝ պինդ վիճակում, որը կարող է հեշտությամբ բռնկվել կամ շփման արդյունքում բռնկման կամ այրման պահպանման պատճառ լինել.

վտանգավորության նշան՝ ցայտուն գույների, գծագրական խորհրդանիշների և պարզաբանող գրառումների օգտագործմամբ որոշակի երկրաչափական ձևի գունագծագրական պատկեր, որը նախատեսված է քաղաքացիներին անմիջական կամ հնարավոր վտանգի մասին նախազգուշացնելու, որոշակի գործողություններ արգելելու, կարգադրելու կամ թույլ տալու համար.

ընտրողական թունավորություն՝ ներգործության տեսակ, որը մեկանգամյա և կարճաժամկետ կամ բազմակի և երկարատև ներգործության դեպքում առաջացնում է կենդանի օրգանիզմի առանձին օրգանների (օրգան-թիրախների) և (կամ) համակարգերի ֆունկցիաների խանգարումներ.

ներմուծող՝ Միության անդամ պետության ռեզիդենտ, որը Միության անդամ պետության ոչ ռեզիդենտի հետ կնքել է Միության մաքսային տարածք քիմիական արտադրանք ներմուծելու մասին արտաքին առևտրային պայմանագիր, իրականացնում է քիմիական արտադրանքի իրացում և պատասխանատվություն է կրում սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության համար.

քաղցկեղածնություն՝ քիմիական արտադրանքի այնպիսի մուտացիաներ (կենդանի բջջի գենետիկ կառուցվածքի փոփոխություններ) առաջացնելու ունակությունը, որոնք կարող են հանգեցնել չարորակ նորագոյացությունների (ուռուցքների) զարգացմանը.

քաղցկեղածիններ՝ քիմիական արտադրանք, որն ունակ է առաջացնելու կամ արագացնելու չարորակ նորագոյացությունների (ուռուցքների) զարգացումը.

դասակարգում՝ քիմիական արտադրանքի՝ վտանգավորության կոնկրետ դասին (ենթադասին, տիպին) համապատասխանության որոշումը՝ ըստ վտանգավորության չափանիշների.

կոռոզիոն ակտիվ քիմիական արտադրանք՝ արտադրանք, որը քիմիական ներգործության արդյունքում կարող է զգալի վնասել կամ քայքայել նյութերը.

վտանգավորության չափանիշներ՝ քիմիական արտադրանքի վիճակի քանակական և (կամ) որակական արժեքները՝ մարդու, կենդանիների, շրջակա միջավայրի, ինչպես նաև գույքի համար անվտանգության տեսանկյունից, որոնց հիման վրա ձևավորվում է վտանգավոր ներգործության տեսակի և մակարդակի գնահատականը.

մուտագեն՝ քիմիական արտադրանք, որն ունակ է կենդանի բջիջների և կենդանի օրգանիզմների պոպուլյացիայում առաջացնել մուտացիայի դեպքերի թվի ավելացում.

մուտագենություն՝ քիմիական արտադրանքի՝ մուտացիաներ առաջացնելու ունակությունը.

նոր քիմիական արտադրանք՝ նոր քիմիական նյութ համարվող կամ նոր քիմիական նյութեր պարունակող քիմիական արտադրանք.

նոր քիմիական նյութ՝ քիմիական նյութ, որի մասին տեղեկությունները ներառված չեն Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում.

նոտիֆիկացում՝ նոր քիմիական նյութերի մասին տեղեկությունները Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում ներառելու ընթացակարգ.

օքսիդացնող քիմիական արտադրանք՝ քիմիական արտադրանք, որը պահպանում և ինտենսիվացնում է այրումը, ջերմանշատիչ օքսիդացնող-վերականգնող ռեակցիայի արդյունքում առաջացնում է այլ նյութերի բոցավառում կամ նպաստում է այդ բոցավառմանը (պարտադիր չէ, որ օքսիդացնող քիմիական արտադրանքն ինքնին բոցավառվող (ոյուրավառ) լինի).

օրգանական պերօքսիդներ՝ հեղուկ կամ պինդ վիճակում օրգանական նյութեր, որոնք պարունակում են երկվալենտ կառուցվածք և կարող են դիտվել որպես ջրածնի պերօքսիդի ածանցյալ արգասիք, որում ջրածնի մեկ կամ երկու ատոմ տեղակալված են օրգանական ռադիկալներով (օրգանական պերօքսիդները

և դրանց խառնուրդները ջերմային առումով անկայուն են, ինչը կարող է հանգեցնել դրանց ինքնարագացող ջերմանջատիչ տարրալուծմանը)։

հիմնական քիմիական նյութ՝ քիմիական արտադրանքի բաղադրիչ, որը հալվելանյութ կամ խառնուկ չէ, կազմում է այդ արտադրանքի զգալի մասը և այդ պատճառով օգտագործվում է որպես քիմիական արտադրանքի անվանում և դրա մանրամասն նույնականացում։

սուր թունավորություն՝ բացասական հետևանքներ, որոնք առաջանում են նյութը ստամոքս ներմուծելուց կամ մաշկի վրա նյութը մեկանգամյա չափաբաժնով քսելուց կամ 24 ժամվա ընթացքում նյութի բազմակի ներգործումից կամ 4 ժամվա ընթացքում ներշնչվող օդի հետ նյութի ներթափանցումից հետո։

անվտանգության անձնագիր՝ քիմիական արտադրանքի՝ սահմանված ձևի անվտանգության անձնագիր, որը պարունակում է տեղեկություններ՝ քիմիական արտադրանքի վտանգավոր հատկությունների մասին, տեղեկություններ՝ այդ արտադրանքն արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), այդ արտադրանքը ներմուծողի մասին, ինչպես նաև պարունակում է Միության մաքսային տարածքում քիմիական արտադրանքի անվտանգ շրջանառության ապահովման համար կանխման միջոցներ և անվտանգության պահանջներ։

պերսիստենտություն՝ քիմիական արտադրանքի՝ տարրալուծման և տրանսֆորմացիայի պրոցեսների նկատմամբ կայունությունը։

իրակիր քիմիական արտադրանք՝ քիմիական արտադրանք, որը (նույնիսկ ոչ մեծ քանակություններով) կարող է բոցավառվել 5 րոպեում՝ օդի հետ շփումից հետո։

սպառող (ձեռքբերող)՝ գրանցված իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձ, ինչպես նաև ֆիզիկական անձ, որոնք մտադիր են ձեռք բերել (ձեռք են բերում) քիմիական արտադրանք։

կանխող միջոցներ՝ միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել վտանգավոր քիմիական արտադրանքի ներգործությամբ պայմանավորված անբարենպաստ հետևանքները նվազագույնի հասցնելու կամ կանխելու համար։

Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստր՝ տեղեկատվական ռեսուրս, որը տեղեկություններ է պարունակում քիմիական նյութերի և խառնուրդների հատկությունների մասին, այդ թվում՝ Միության մաքսային տարածքում դրանք արգելելու, սահմանափակելու կամ դրանց կիրառումը թույլ

տալու մասին.

ինքնատաքացվող քիմիական արտադրանք՝ հեղուկ կամ պինդ ագրեգատային վիճակում գտնվող քիմիական արտադրանք (բացառությամբ հրակիր քիմիական արտադրանքի), որն օդի հետ շփվելիս, առանց դրսից էներգիայի առբերման, ունակ է ինքնատաքացման (ինքնատաքացվող քիմիական արտադրանքը տարբերվում է հրակրից նրանով, որ այն բոցավառվում է միայն մեծ քանակություններով (կիլոգրամներով)) և երկար ժամանակահատվածից (ժամեր, օրեր) հետո).

զգայունացնող ազդեցություն՝ օրգանիզմի՝ ալերգիկ ռեակցիա առաջացնող քսենոբիոտիկների ներգործության նկատմամբ զգայունության բարձրացում.

խառնուրդ՝ երկու կամ ավելի քիմիական նյութերի բաղադրությամբ խառնուրդ կամ լուծույթ, որոնցում քիմիական նյութերը միմյանց հետ ռեակցիայի մեջ չեն մտնում.

թունավորություն՝ քիմիական արտադրանքի՝ օրգանիզմի վնասում կամ մահ առաջացնելու հատկություն՝ դրա վրա ոչ մեխանիկական ճանապարհով ներգործելով.

քիմիական արտադրանք՝ քիմիական նյութ կամ խառնուրդ.

քիմիական նյութ՝ քիմիական տարրեր և (կամ) դրանց միացություններ, որոնք գտնվում են բնական վիճակում կամ ստացվել են ցանկացած արտադրական պրոցեսի արդյունքում, ներառյալ՝ ցանկացած հավելանյութեր, որոնք անհրաժեշտ են կայունության ապահովման համար, և ցանկացած խառնուկներ, որոնք պայմանավորված են քիմիական արտադրանքի ստացման գործընթացով՝ բացառելով ցանկացած լուծիչ, որը կարելի է առանձնացնել՝ առանց քիմիական նյութի կայունությունը խախտելու կամ դրա բաղադրությունը փոխելու (քիմիական նյութերի թվին դասվում է այն քիմիական արտադրանքը, որում քիմիական նյութն առկա է 80 և ավելի տոկոս կոնցենտրացիայով (ըստ զանգվածի), ընդ որում, մնացած 20 և պակաս տոկոսը (ըստ զանգվածի) համարվում են խառնուկներ և (կամ) հավելանյութեր).

քրոնիկ թունավորություն՝ թունավորության ձև, որն առաջացնում է կենդանի օրգանիզմի հիվանդություն և (կամ) մահ՝ բազմակի և (կամ) երկարատև ներգործության դեպքում.

Էկոթունավոր քիմիական նյութ՝ քիմիական նյութ, որն ունակ է շրջակա միջավայրում անբարենպաստ հետևանքներ առաջացնելու:

III. Քիմիական արտադրանքի նույնականացման կանոնները

5. Քիմիական արտադրանքի նույնականացումը կատարվում է այդ արտադրանքն արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի կողմից:

6. Քիմիական արտադրանքի նույնականացումը ներառում է՝

ա) քիմիական արտադրանքի անվանման սահմանումը.

բ) քիմիական արտադրանքը քիմիական նյութերին կամ խառնուրդներին դասելը.

գ) քիմիական նյութի համար անվանման սահմանումը՝ համաձայն Տեսական և կիրառական քիմիայի հարցերով միջազգային միության անվանացանկի (այսուհետ՝ IUPAC անվանացանկ) և Ամերիկյան քիմիական հասարակության քիմիական ռեֆերենս ծառայության ռեեստր ներմուծված քիմիական նյութի նույնականացուցչի (CAS) (այսուհետ՝ CAS համար) (առկայության դեպքում) սահմանումը.

դ) խառնուրդի քիմիական բաղադրությունը որոշելը՝ բաղադրության մեջ մտնող յուրաքանչյուր նույնականացվող բաղադրիչի համար IUPAC անվանացանկի համաձայն անվանումը և CAS համարը (առկայության դեպքում) սահմանելով.

ե) քիմիական արտադրանքի բաղադրության մեջ 0,1 %-ից ավելի կոնցենտրացիաներով նոր քիմիական նյութերի առկայության որոշումը.

զ) քիմիական արտադրանքի բաղադրության քիմիական նյութերը դասելը՝
նոր քիմիական նյութերի շարքին.

Միության մաքսային տարածքում կիրառման համար արգելված քիմիական նյութերի շարքին.

Միության մաքսային տարածքում կիրառման համար սահմանափակված

քիմիական նյութերի շարքին.

Է) քիմիական արտադրանքի կիրառման ոլորտը սահմանելը.

ը) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

7. Քիմիական նյութի քիմիական բաղադրությունը որոշելիս անհրաժեշտ է նույնականացնել՝

ա) հիմնական քիմիական նյութը.

բ) վտանգավոր քիմիական նյութերը հավելանյութերի և խառնուկաների բաղադրության մեջ, եթե դրանք առկա են այն քանակություններով, որոնք գերազանցում են կոնցենտրացիաների արժեքները, նշված են այն ստանդարտների ցանկում ներառված ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքներով կիրառման արդյունքում ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը:

8. խառնուրդի քիմիական բաղադրությունը որոշելիս անհրաժեշտ է նույնականացնել՝

ա) քիմիական նյութերը, որոնք առկա են 10 %-ից ավելի կոնցենտրացիաներով.

բ) վտանգավոր քիմիական նյութերը, որոնք առկա են այն քանակություններով, որոնք գերազանցում են այն ստանդարտների ցանկում ներառված ստանդարտներում նշված կոնցենտրացիաների արժեքները, որոնց կամավոր հիմունքներով կիրառման արդյունքում ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը:

9. Քիմիական արտադրանք արտադրողները (արտադրողի կողմից լիազորված անձինք), ներմուծողները դրա նույնականացման համար օգտագործում են Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեգիստրում քիմիական նյութերի և խառնուրդների մասին պարունակվող տեղեկությունները:

IV. Միության շուկայում քիմիական արտադրանքի շրջանառության կանոնները

10. Քիմիական արտադրանքը Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ է դրվում, եթե այն համապատասխանում է սույն տեխնիկական

կանոնակարգի պահանջներին, ինչպես նաև Միության (Մաքսային միության) այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, և պայմանով, որ այն անցել է Միության (Մաքսային միության) այն տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատում, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

11. Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում քիմիական արտադրանքի մասին տեղեկությունների բացակայության դեպքում քիմիական արտադրանքը պետք է նույնականացվի որպես նոր քիմիական արտադրանք, իսկ դրա բաղադրության մեջ մտնող նոր քիմիական նյութերը պետք է նոտիֆիկացվեն սույն տեխնիկական կանոնակարգի 46-48 կետերին համապատասխան՝ մինչև Միության մաքսային տարածքում այդ քիմիական նյութերը պարունակող քիմիական արտադրանքը շրջանառության մեջ դնելը:

12. Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորման և վարման կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

13. Քիմիական այն արտադրանքը, որը համապատասխանում է սույն տեխնիկական կանոնակարգի և Միության (Մաքսային միության) այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, և որն անցել է համապատասխանության գնահատում, մակնշվում է Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

V. Քիմիական արտադրանքի դասակարգմանը ներկայացվող պահանջները

14. Քիմիական արտադրանքի դասակարգումը կատարվում է այդ արտադրանքն արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի կողմից:

Քիմիական արտադրանքի դասակարգումը կատարվում է միջազգային և տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկին

համապատասխան, որոնց կամավոր հիմունքներով կիրառման արդյունքում ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը:

15. Զիմիական արտադրանքի դասակարգումը, ըստ վտանգավոր հատկությունների, կատարվում է՝ հաշվի առնելով այն թիմիական նյութերի և խառնուրդների վտանգավոր հատկությունների մասին տվյալները՝

ա) որոնք պարունակվում են Միության՝ թիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում.

բ) որոնք ստացվել են այն ստանդարտների ցանկում ներառված ստանդարտներում նշված չափանիշներին համապատասխանության մասով դրանց հետազոտությունների (փորձարկումների) արդյունքում, որոնց կամավոր հիմունքներով կիրառման արդյունքում ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը:

16. Զիմիական արտադրանքը, ըստ մարդու կյանքի և առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության նկատմամբ վտանգավոր ներգործության տեսակների՝ կապված թիմիական արտադրանքի ֆիզիկաքիմիական հատկությունների հետ, բաժանվում է հետևյալ խմբերի՝

- ա) պայթուցիկ թիմիական արտադրանք.
- բ) սեղմված գազ (հեղուկացված գազ).
- գ) բոցավառվող գազանման թիմիական արտադրանք (բոցավառվող գազ).
- դ) բոցավառվող թիմիական արտադրանք՝ աերոզոլային փաթեթվածքում.
- ե) բոցավառվող (ոյուրավառ) հեղուկ.
- զ) պինդ վիճակում գտնվող բոցավառվող թիմիական արտադրանք.
- է) ինքնաքայքայվող (ինքնառեակտիվ) թիմիական արտադրանք.
- ը) հրակիր թիմիական արտադրանք.
- թ) ինքնատաքացվող թիմիական արտադրանք (բացառությամբ հրակիր թիմիական արտադրանքի).
- ժ) ջրի հետ շփվելիս վտանգավոր թիմիական արտադրանք.

ժա) օքսիդացնող քիմիական արտադրանք.

ժբ) օրգանական պերօքսիդներ.

ժգ) կոռոզիոն ակտիվ քիմիական արտադրանք:

17. Մարդու և կենդանիների կյանքի և առողջության նկատմամբ վտանգավոր հատկություններ դրսևորող քիմիական արտադրանքի շարքին դասվում է հետևյալ քիմիական արտադրանքը, որի բաղադրության մեջ առկա են վտանգավոր քիմիական նյութեր և խառնուրդներ այն ստանդարտներում նշված կոնցենտրացիաների արժեքները գերազանցող քանակությամբ, որոնք ներառված են միջազգային և տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկում, որոնց կամավոր հիմունքներով կիրառման արդյունքում ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը՝

ա) ունի սուր թունավորություն՝ կենդանի օրգանիզմի վրա ներգործության մասով.

բ) առաջացնում է մաշկի կերամաշում (նեկրոզ) և գրգռվածություն.

գ) առաջացնում է աչքերի լուրջ վնասում (գրգռվածություն).

դ) ցուցաբերում է զգայունացնող ազդեցություն.

ե) ունի մուտագեն հատկություններ (մուտագեններ).

զ) ունի քաղցկեղածին հատկություններ (քաղցկեղածիններ).

է) ներգործում է վերարտադրողական ֆունկցիայի վրա.

ը) կենդանի օրգանիզմի առանձին օրգանների (օրգան-թիրախների) և (կամ) համակարգերի նկատմամբ ունի ընտրողական թունավորություն՝ մեկանգամյա և կարճաժամկետ ներգործության դեպքում կամ բազմակի անգամ և երկարատև ներգործության դեպքում.

թ) վտանգ է ներկայացնում ասպիրացիայի դեպքում.

ժ) կայուն է, ունակ է կուտակվելու թունավոր նյութերի կենսաբանական օբյեկտներում.

ժա) բնորոշվում է հատուկ կայունությամբ և կենսակուտակման

ունակությամբ.

Ժբ) դրա վտանգավորության մակարդակը համապատասխանում է այնպիսի միացությունների վտանգավորության մակարդակին, ինչպիսիք են մասնավորապես Էնդոկրին համակարգի «քայքայիչները», որոնց վերաբերյալ առկա է շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա դրանց հավանական լուրջ ներգործության գիտականորեն հիմնավորված ապացույց:

18. Շրջակա միջավայրի համար վտանգավոր քիմիական արտադրանքի շարքին դասվում է հետևյալ քիմիական արտադրանքը, որի բաղադրության մեջ առկա են վտանգավոր քիմիական նյութեր և խառնուրդներ այն ստանդարտներում նշված կոնցենտրացիաների արժեքները գերազանցող քանակությամբ, որոնք ներառված են միջազգային և տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկում, որոնց կամավոր հիմունքներով կիրառման արդյունքում ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը.

- ա) արտադրանք, որը քայքայում է օզոնային շերտը,
- բ) ունի սուր և քրոնիկ թունավորություն ջրային միջավայրի համար,
- գ) ունի կենսակուտակման ունակություն,
- դ) կայուն է տարրալուծման և տրանսֆորմացիայի (պերսիստենտության) գործընթացների նկատմամբ,
- ե) ունի թունավորություն հողի համար:

19. Ջրային միջավայրի նկատմամբ վտանգավոր քիմիական արտադրանքի դասակարգման հիմնական տարրերն են՝

- ա) սուր թունավորությունը ջրային միջավայրում,
- բ) քրոնիկ թունավորությունը ջրային միջավայրում,
- գ) կենսակուտակման հնարավորությունը կամ փաստացի կենսակուտակումը,
- դ) տարրալուծումը (բիոտիկ և աբիոտիկ)՝ կիրառելի է օրգանական քիմիական նյութերի նկատմամբ:

20. Թիմիական արտադրանքը դասվում է օգոնային շերտը քայքայող արտադրանքի շարքին, եթե դրա բաղադրության մեջ առկա է օգոնային շերտը քայքայող քիմիական նյութերի ցանկից առնվազն մեկ նյութ: Օգոնային շերտը քայքայող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) միջպետական համաձայնագրերով և միջազգային համաձայնագրերով, որոնց միացել են բոլոր անդամ պետությունները՝ Միության մաքսային տարածք այդ քիմիական արտադրանքի ներմուծման կարգավորման ոլորտում:

21. Հողի նկատմամբ վտանգավոր քիմիական արտադրանքի դասակարգումը կատարվում է քիմիական արտադրանքի վտանգավորության ցուցանիշների համալիրի հիման վրա, որը ներառում է՝

- ա) թունավորությունը՝ հողային օրգանիզմների համար.
- բ) պերսիստենտությունը հողում.
- գ) պերսիստենտությունը բույսերում.
- դ) քիմիական արտադրանքի տարաշարժման ունակությունը.
- ե) գյուղատնտեսական արտադրանքի սննդային արժեքավորության վրա ազդեցությունը:

22. Թիմիական արտադրանքի դասակարգումը, ըստ վտանգավոր հատկությունների, կատարվում է դրա բաղադրության մեջ մտնող քիմիական նյութերի կամ ընդհանուր առմամբ խառնուրդների հետազոտությունների (փորձարկումների) արդյունքում ստացված տվյալների հիման վրա կամ իրենից խառնուրդ ներկայացնող քիմիական արտադրանքի համար հաշվարկային մեթոդների օգնությամբ ստացված տվյալների արդյունքներով:

23. Թիմիական արտադրանքի՝ ըստ վտանգավոր հատկությունների դասակարգման արդյունքները, որոնք անցկացվել են դրա բաղադրության մեջ մտնող քիմիական նյութերի կամ խառնուրդների հետազոտությունների (փորձարկումների) արդյունքում ստացված տվյալների օգտագործմամբ, գերակայում են հաշվարկային մեթոդների օգնությամբ ստացված դասակարգման արդյունքների նկատմամբ:

24. Թիմիական արտադրանքի վտանգավորության սահմանված դասը (ենթադասը, տիպը) նշվում է այդ արտադրանքն արտադրողի (արտադրողի

կողմից լիազորված անձի), ներմուծողի կողմից անվտանգության անձնագրում:

25. Դասակարգման նպատակով քիմիական արտադրանքի հետազոտությունները (փորձարկումները) իրականացվում են այդ արտադրանքն արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի կողմից լաբորատորիաներում (կենտրոններում)՝ իրենց ընտրությամբ:

26. խառնուրդների՝ ըստ վտանգավոր հատկությունների դասակարգումը կատարվում է հետևյալ սկզբունքներին համապատասխան՝

ա) խառնուրդների բաղադրության մեջ քիմիական նյութերի կամ ընդհանուր առմամբ խառնուրդների մասով հետազոտությունների (փորձարկումների) տվյալների առկայության դեպքում դասակարգումը կատարվում է այդ տվյալների հիման վրա.

բ) խառնուրդների բաղադրության մեջ քիմիական նյութերի կամ ընդհանուր առմամբ խառնուրդների մասով հետազոտությունների (փորձարկումների) տվյալների բացակայության դեպքում օգտագործվում են միջարկման կամ արտարկման մեթոդները (վտանգավորության գնահատման մեթոդներ՝ դասակարգվող խառնուրդներին համանման խառնուրդների մասով առկա տվյալների օգտագործմամբ).

գ) ընդհանուր առմամբ խառնուրդների մասով հետազոտությունների (փորձարկումների) տվյալների բացակայության և այնպիսի տեղեկատվության բացակայության դեպքում, որը թույլ կտար կիրառել միջարկման կամ արտարկման մեթոդները, դասակարգման համար օգտագործվում են վտանգավորության գնահատման մեթոդները՝ խառնուրդի բաղադրության մեջ առանձին քիմիական նյութերի մասով տվյալների հիման վրա:

27. Քիմիական արտադրանքը դրա բաղադրակազմը փոփոխելիս ենթակա է կրկնակի դասակարգման, եթե այդ փոփոխության դեպքում դրա բաղադրության մեջ մտնող քիմիական նյութերի կոնցենտրացիան իրենց սկզբնական կոնցենտրացիայի նկատմամբ գերազանցել է քիմիական արտադրանքի բաղադրության մեջ վտանգավոր քիմիական նյութերի պարունակության թույլատրելի շեղումները՝ N 2 հավելվածի համաձայն:

VI. Քիմիական արտադրանքի անվտանգությանը

Ներկայացվող պահանջները

28. Զիմիական արտադրանքի շրջանառության անվտանգությունը պետք է ապահովվի՝

ա) քիմիական արտադրանք արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի կողմից սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման միջոցով.

բ) սպառողի (ձեռքբերողի) կողմից քիմիական արտադրանքն ըստ նշանակության օգտագործելու (կիրառելու) միջոցով.

գ) քիմիական արտադրանքի՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման միջոցով.

դ) քիմիական արտադրանք արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի և սպառողի (ձեռքբերողի) կողմից քիմիական արտադրանքի հետ վարվելիս կանխարգելիչ միջոցառումների իրականացման միջոցով.

ե) վտանգավոր քիմիական նյութերն առավել ցածր դասի վտանգավորության քիմիական նյութերով կամ որպես վտանգավոր չդասակարգված քիմիական նյութերով փոխարինելու (հնարավորության դեպքում) միջոցով.

զ) մարդու կյանքի և առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության նկատմամբ քիմիական արտադրանքի վտանգավոր հատկությունների, ինչպես նաև Միության մաքսային տարածքում դրա անվտանգ շրջանառության միջոցների մասին, այդ թվում՝ պիտանիության ժամկետը լրանալու կամ օգտագործման համար ոչ պիտանի լինելու դեպքում սպառողին (ձեռքբերողին) տեղեկացնելու միջոցով.

է) քիմիական արտադրանքի անվտանգ օգտահանման և չեզոքացման մեթոդների մասին սպառողին (ձեռքբերողին) տեղեկացնելու միջոցով:

VII. Զիմիական արտադրանքի մականշվածքին

Ներկայացվող պահանջները

29. Զիմիական արտադրանքի մականշվածքը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

ա) քիմիական արտադրանքի անվանումը, որը սահմանվել է այն նույնականացնելիս (քիմիական արտադրանքի անվանումը լրացուցիչ կարող է ներառել առևտրային (ֆիրմային) անվանումը)։

բ) քիմիական արտադրանք արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի անվանումը, գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն), ներառյալ՝ երկիրը և հեռախոսահամարը։

գ) այն քիմիական նյութերի և խառնուրդների անվանումը, որոնք դասակարգվել են որպես վտանգավոր և պարունակվում են քիմիական արտադրանքի բաղադրության մեջ այն քանակություններով, որոնք գերազանցում են այն միջազգային և տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկում ներառված ստանդարտներում նշված կոնցենտրացիաների արժեքները, որոնց կամավոր հիմունքներով կիրառման արդյունքում ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը։

դ) պահման պայմանները և արտադրողի երաշխիքային պարտավորությունները (պիտանիության ժամկետ, պահման ժամկետ և այլն)։

ե) փաստաթղթի նշագիրը, որի համաձայն պատրաստված է քիմիական արտադրանքը (առկայության դեպքում)։

զ) քիմիական արտադրանքի վտանգավոր հատկությունների մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ նախազգուշացնող մականշվածքը։

30. Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող քիմիական արտադրանքի մակնշումը պետք է կատարվի ռուսերենով և անդամ պետությունների օրենսդրության մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում այն անդամ պետության պետական լեզուներով, որի տարածքում իրացվում է քիմիական արտադրանքը։

31. Մականշվածքը պետք է լինի հստակ և դյուրընթեռնելի, մեխանիկական ներգործության, քիմիական նյութերի, կլիմայական գործոնների ներգործության նկատմամբ կայուն և պետք է պահպանվի մինչև քիմիական արտադրանքի լրիվ օգտագործման և (կամ) օգտահանման (վերամշակման) պահը։

32. Զիմիական արտադրանքի մականշվածքը կարող է պարունակել լրացուցիչ տեղեկություններ:

33. Զիմիական արտադրանքի մակնշումը կատարվում է անմիջապես արտադրանքի փաթեթվածքի վրա կամ փաթեթվածքին փակցված դրա մանեկապիտակի վրա: Նախազգուշացնող մականշվածքի տարրերն այլ տեղեկությունների համեմատ, որոնք պարունակվում են քիմիական արտադրանքի մականշվածքում, պետք է առանձնանան և համապատասխանեն ԳՕՍՍ 31340-2013-ին:

34. Եթե մակնշումը կատարելու համար փաթեթվածքի վրա տեղը բավարար չէ, քիմիական արտադրանքն ուղեկցվում է պիտակով կամ թուղթ-ներդիրով, որտեղ ամբողջ ծավալով բերվում են սույն տեխնիկական կանոնակարգի 29-րդ կետում նշված տեղեկությունները:

VIII. Նախազգուշացնող մականշվածքին ներկայացվող պահանջները

35. Նախազգուշացնող մակնշումը կատարվում է վտանգի նշանի, վտանգի խորհրդանիշի, ազդանշանային բառի տեսքով և ԳՕՍՍ 31340-2013-ին համապատասխան՝ պարունակում է վտանգի կանխման միջոցառումների նկարագրություն:

IX. Անվտանգության անձնագրին ներկայացվող պահանջները

36. Զիմիական արտադրանքը Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնող արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը), ներմուծողը կազմում են անվտանգության անձնագիր:

Անվտանգության անձնագիր կազմելիս կարող են օգտագործվել Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում առկա քիմիական նյութերի և խառնուրդների հատկությունների մասին տեղեկությունները:

37. Զիմիական արտադրանքի մատակարարումների դեպքում անվտանգության անձնագիրը պետք է ներառվի քիմիական արտադրանքի ուղեկցող փաստաթղթերի կազմում:

38. Անվտանգության անձնագիրը ձևակերպվում է մինչև Միության մաքսային տարածքում քիմիական արտադրանքը շրջանառության մեջ դնելը:

39. Տեղեկություններին ներկայացվող պահանջները, որոնք պետք է պարունակվեն անվտանգության անձնագրում, նշված են ԳՕՍՏ 30333-2007-ում:

40. Անվտանգության անձնագրի բնօրինակը պահվում է քիմիական արտադրանք արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի մոտ:

41. Անվտանգության անձնագրի գործողության ժամկետն անսահմանափակ է:

42. Անվտանգության անձնագիրը ենթակա է թարմացման և վերաթողարկման հետևյալ դեպքերում՝

ա) քիմիական արտադրանք արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի անվանման և (կամ) հասցեի փոփոխության.

բ) քիմիական արտադրանքի բաղադրության փոփոխության, որը հանգեցնում է այդ արտադրանքի կրկնակի դասակարգմանը՝ սույն տեխնիկական կանոնակարգի 27-րդ կետին համապատասխան.

գ) տվյալների ամբողջականությունը և հավաստիությունը բարձրացնող լրացուցիչ կամ նոր տեղեկություններ ստանալու:

43. Քիմիական արտադրանք սպառողների (ձեռքբերողների) և ցանկացած գրանցված շահագրգիռ իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի, ինչպես նաև ֆիզիկական անձանց պահանջի համաձայն՝ այդ արտադրանքն արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի կողմից անվտանգության անձնագրի պատճենը պետք է նրանց տրամադրվի անհատույց:

Մ. Քիմիական արտադրանքի՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապահովումը

44. Քիմիական արտադրանքի՝ սույն տեխնիկական կանոնակարգին համապատասխանությունն ապահովվում է դրա պահանջների կատարմամբ:

45. Քիմիական արտադրանքի հետազոտությունների (փորձարկումների)

մեթոդները սահմանվում են միջազգային և տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկում ներառված ստանդարտներում, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններ և մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ, որոնք անհրաժեշտ են սույն տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու և կատարելու ու քիմիական արտադրանքի համապատասխանության գնահատում իրականացնելու համար:

XI. Նոր քիմիական նյութերի նոտիֆիկացումը

46. Նոր քիմիական նյութերի նոտիֆիկացումն իրականացվում է դրանց մասին տեղեկությունները Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեգիստր ներմուծելու ճանապարհով:

47. Նոտիֆիկացումը կատարվում է անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից (այսուհետ՝ լիազորված մարմիններ) Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող նոր քիմիական արտադրանքի նկատմամբ՝ սույն տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

48. Նոր քիմիական նյութերի նոտիֆիկացման նպատակով լիազորված մարմին ուղարկվող տեղեկությունները պետք է ներառեն՝

ա) քիմիական անվտանգության մասին հաշվետվություն՝ N 3 հավելվածի համաձայն կառուցվածքին համապատասխան.

բ) քիմիական նյութի անվանումը՝ IUPAC անվանացանկի համաձայն, այդ թվում՝ անգլերենով.

գ) քիմիական նյութի կառուցվածքային բանաձևը.

դ) CAS համարը.

ե) քիմիական նյութի գործիքային անալիզի տվյալները.

զ) քիմիական նյութի մաքրության աստիճանը.

է) քիմիական նյութի կիրառման ենթադրյալ ոլորտները.

ը) քիմիական նյութի օգտահանման (վերամշակման) ենթադրյալ մեթոդները.

թ) քիմիական նյութի փոխադրման եղանակը և արտակարգ իրավիճակների կանխման և առաջացած արտակարգ իրավիճակների վերացման միջոցառումները.

ժ) հսկողության անալիտիկ մեթոդները.

ժա) քիմիական նյութի ֆիզիկաքիմիական տվյալները.

ժբ) քիմիական նյութի թունավորությանը վերաբերող տվյալները.

ժգ) քիմիական նյութի էկոթունավորությանը վերաբերող տվյալները.

ժզ) քիմիական նյութի այն հետազոտությունների (փորձարկումների) տվյալների պատճենները՝ ուղղված կենսակուտակման, քաղցկեղածնության, մոլտագենության, թունավորության որոշմանը, որոնք անցկացվել են անդամ պետության օրենսդրության համապատասխան լիազորված մարմնի կողմից պատշաճ լաբորատոր գործելակերպի սկզբունքներին համապատասխանող ճանաչված լաբորատորիաներում (կենտրոններում) (թույլատրվում է այլ լաբորատորիաներում (կենտրոններում) հետազոտությունների (փորձարկումների) անցկացումը սույն տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում):

XII. Քիմիական արտադրանքի՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատումը

49. Մինչև Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվելը՝ քիմիական արտադրանքը ենթակա է համապատասխանության գնահատման:

50. Քիմիական արտադրանքի՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացվում է հետևյալ ձևերով՝

ա) ծանուցողական պետական գրանցում.

բ) թույլատրական պետական գրանցում:

51. Քիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցման և

թույլատրական պետական գրանցման դեպքում հայտատու կարող են լինել անդամ պետության օրենսդրությանը համապատասխան դրա տարածքում որպես անհատ ձեռնարկատերեր գրանցված ֆիզիկական անձինք կամ իրավաբանական անձինք, որոնք այդ արտադրանքն արտադրողները (արտադրողների կողմից լիազորված անձինք), ներմուծողներն են:

52. Զիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցումը և թույլատրական պետական գրանցումը կատարվում են լիազորված անձի կողմից:

53. Զիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցումը կատարվում է այն դեպքում, երբ քիմիական արտադրանքի մասին տեղեկությունները ներառված են Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում, և կատարվում է հետևյալ պահանջներից մեկը՝

ա) քիմիական արտադրանքի բաղադրության մեջ չեն մտնում Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում ներառված, կիրառման համար արգելված և (կամ) սահմանափակված քիմիական նյութերը և խառնուրդները.

բ) քիմիական արտադրանքը պարունակում է կիրառման համար սահմանափակված քիմիական նյութեր և խառնուրդներ, որոնց մասին տեղեկությունները ներառված են Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում՝ համաձայն N 4 հավելվածի սահմանված սահմանային պարունակությունից ցածր կոնցենտրացիաներով:

54. Զիմիական արտադրանքի՝ քիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցման մասին վկայականի տրամադրմամբ ծանուցողական պետական գրանցման համար հայտատուն լիազորված մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) քիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցում անցկացնելու մասին հայտ՝ համաձայն N 5 հավելվածի ձևի.

բ) սույն տեխնիկական կանոնակարգի 36-43 կետերին համապատասխան ձևակերպված անվտանգության անձնագիր.

գ) փորձարարական (հետազոտական) լաբորատորիաներում (կենտրոններում) անցկացված հետազոտությունների (փորձարկումների) արձանագրություններ և (կամ) պաշտոնական տեղեկատվական աղբյուրներից ստացված տեղեկություններ պարունակող փաստաթղթեր: Հետազոտությունների

(փորձարկումների) արձանագրությունները չեն ներկայացվում Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում ներառված քիմիական արտադրանքի համար, ինչպես նաև այն քիմիական արտադրանքի համար, որը կարելի է դասակարգել հաշվարկային մեթոդների օգնությամբ:

55. Քիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցումը կարող է անցկացվել Էլեկտրոնային եղանակով:

56. Սույն տեխնիկական կանոնակարգի 55-րդ կետին համապատասխան քիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցման անցկացման համար հայտատուն լիազորված մարմին է ներկայացնում սույն տեխնիկական կանոնակարգի 54-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերն Էլեկտրոնային եղանակով:

57. Ինչպես Էլեկտրոնային եղանակով, այնպես էլ թղթային կրիչով հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելը, քիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցման կամ դրանում մերժման մասին որոշում ընդունելը, քիմիական արտադրանքին անհատական գրանցման համարը շնորհելը, քիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցման մասին վկայական տրամադրելը՝ համաձայն N 6 հավելվածի ձևի, ինչպես նաև Էլեկտրոնային եղանակով գրանցման մասին նշումներ կատարելն իրականացվում են լիազորված անձի կողմից սույն տեխնիկական կանոնակարգի 54-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման ամսաթվից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

58. Քիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցման մասին վկայականի և Էլեկտրոնային եղանակով գրանցման մասին նշումների գործողության ժամկետն անսահմանափակ է:

59. Թույլատրական պետական գրանցումը կատարվում է՝

ա) նոր քիմիական արտադրանքի մասով.

բ) այն քիմիական արտադրանքի մասով, որը պարունակում է կիրառման համար սահմանափակված քիմիական նյութեր և խառնուրդներ, որոնց մասին տեղեկությունները ներառված են Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում՝ սույն տեխնիկական կանոնակարգի N 4 հավելվածով սահմանված սահմանային պարունակությունը գերազանցող

կոնցենտրացիաներով:

60. Զիմիական արտադրանքի թույլատրական պետական գրանցման համար հայտատուն լիազորված մարմին է ուղարկում հետևյալ փաստաթղթերը՝

ա) ջիմիական արտադրանքի թույլատրական պետական գրանցման անցկացման մասին հայտ՝ ըստ սույն տեխնիկական կանոնակարգի N 5 հավելվածով նախատեսված ձևի.

բ) սույն տեխնիկական կանոնակարգի 36-43 կետերին համապատասխան ձևակերպված անվտանգության անձնագիր.

գ) փորձարարական (հետազոտական) լաբորատորիաներում (կենտրոններում) անցկացված հետազոտությունների (փորձարկումների) արձանագրություններ և (կամ) պաշտոնական տեղեկատվական աղբյուրներից ստացված տեղեկություններ պարունակող փաստաթղթեր: Հետազոտությունների (փորձարկումների) արձանագրությունները չեն ներկայացվում այն ջիմիական արտադրանքի համար, որի մասին տեղեկությունները ներառված են Միության՝ ջիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում, ինչպես նաև այն ջիմիական արտադրանքի համար, որը կարելի է դասակարգել հաշվարկային մեթոդների օգնությամբ.

դ) սույն տեխնիկական կանոնակարգի 48-րդ կետում նշված տեղեկությունները:

61. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելը, ջիմիական արտադրանքի թույլատրական պետական գրանցման և դրանում մերժման մասին որոշում ընդունելը, ջիմիական արտադրանքի անհատական գրանցման համարը շնորհելը, ջիմիական արտադրանքի անվանման, դրա ջիմիական բաղադրության և հատկությունների մասին տեղեկություններ ներմուծելը Միության՝ ջիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրում, ջիմիական արտադրանքի օգտագործման թույլտվություն տրամադրելը՝ համաձայն N 7 հավելվածի ձևի, իրականացվում են լիազորված անձի կողմից սույն տեխնիկական կանոնակարգի 60-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալու ամսաթվից հետո՝ 45 աշխատանքային օրվա ընթացքում:

62. Զիմիական արտադրանքի օգտագործման թույլտվության գործողության ժամկետը 5 տարի է՝ սկսած այն տրամադրելու ամսաթվից:

Քիմիական արտադրանքի օգտագործման թույլտվության տրամադրման ամսաթվից 5 տարվա ընթացքում լիազորված մարմնի կողմից սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին քիմիական արտադրանքի անհամապատասխանության մասին դիտողությունների բացակայության դեպքում լիազորված մարմնի կողմից ավտոմատ կերպով կատարվում է այդ արտադրանքի վերագրանցում:

63. Քիմիական արտադրանքի ծանուցողական պետական գրանցման մասին վկայականի և դրա օգտագործման թույլտվության ձևակերպումը և տրամադրումն իրականացվում են լիազորված անձի կողմից՝ Միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորման և վարման կարգին և նոր քիմիական նյութերի նոտիֆիկացման կարգին համապատասխան:

64. Քիմիական արտադրանքի ծանուցողական և թույլատրական պետական գրանցումը կարող է մերժվել՝

ա) հայտատուի կողմից սույն տեխնիկական կանոնակարգի 54-րդ և 60-րդ կետերում նշված ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացվելու դեպքում:

բ) սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին քիմիական արտադրանքի անհամապատասխանության դեպքում:

65. Քիմիական արտադրանքը դրա բաղադրակազմը փոփոխելիս ենթակա է կրկնակի ծանուցողական պետական գրանցման կամ թույլատրական պետական գրանցման, եթե այդպիսի փոփոխության դեպքում դրա բաղադրության մեջ մտնող վտանգավոր քիմիական նյութերի կոնցենտրացիան իրենց սկզբնական կոնցենտրացիայի նկատմամբ գերազանցել է սույն տեխնիկական կանոնակարգի N 2 հավելվածում նշված թույլատրելի շեղումները:

66. Քիմիական արտադրանքի՝ Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը կարող է կասեցվել լիազորված մարմնի կողմից այն դեպքում, երբ՝

ա) Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ գտնվող քիմիական արտադրանքը չի համապատասխանում սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

բ) քիմիական արտադրանքի նկատմամբ սահմանված են անվտանգության նոր պահանջներ:

XIII. Քիմիական արտադրանքի՝

Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը

67. Քիմիական արտադրանքը, որը համապատասխանում է սույն տեխնիկական կանոնակարգի և Միության (Մաքսային միության) այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, և որն անցել է համապատասխանության գնահատման ընթացակարգ՝ համաձայն սույն տեխնիկական կանոնակարգի դրույթների, մակնշվում է Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

68. Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումն իրականացվում է մինչև քիմիական արտադրանքը Միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը:

69. Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է քիմիական արտադրանքի յուրաքանչյուր միավորի վրա (սպառողական և տրանսպորտային փաթեթվածքի կամ պիտակի կամ մանեկապիտակի) ցանկացած եղանակով, որն ապահովում է դրա հստակ և պարզ պատկերն այդ քիմիական արտադրանքի պիտանիության ողջ ժամկետի ընթացքում:

Սպառողական և տրանսպորտային փաթեթվածքի կամ պիտակի կամ մանեկապիտակի վրա Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղելու անհնարինության դեպքում թույլատրվում է դրա զետեղումն ուղեկցող փաստաթղթերի վրա:

70. Քիմիական արտադրանքի՝ Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը վկայում է քիմիական արտադրանքի՝ սույն տեխնիկական կանոնակարգի և Միության այլ տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության մասին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

XIV. Պետական հսկողությունը (վերահսկողությունը)
տեխնիկական կանոնակարգի պահանջների
պահպանման նկատմամբ

71. Զինիական արտադրանքի նկատմամբ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման պետական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«Քիմիական արտադրանքի
անվտանգության մասին»

Եվրասիական տնտեսական միության
տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 041/2017)

ՑԱՆԿ

քիմիական արտադրանքի, որի վրա չի տարածվում
«Քիմիական արտադրանքի անվտանգության մասին»
Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 041/2017) գործողությունը

1. Քիմիական արտադրանք, որը նախատեսված է գիտահետազոտական աշխատանքների համար և (կամ) գիտահետազոտական և (կամ) փորձարարակոնստրուկտորական մշակումների արդյունք է:
2. Օգտակար հանածոներ՝ տեղադրված վիճակում, ինչպես նաև հետևյալ արտադրանքը, եթե այն քիմիապես չի փոփոխվել՝ միներալներ, հանքաքարեր, հանքաքարային խտանյութեր, ցեմենտի կլինկեր, բնական գազ, հեղուկացված գազ, գազային կոնդենսատ, տեխնոլոգիական գազ և դրա բաղադրիչները, ջրազրկված, աղազրկված և կայունացված նավթ, ուղեկից նավթային գազ, ածուխ, կոքս:
3. Դեղամիջոցներ և անասնաբուժական դեղամիջոցներ:
4. Օծանելիքակոսմետիկական արտադրանք:
5. Քիմիական արտադրանք, որն իոնացնող ճառագայթման աղբյուր է (այդ թվում՝ այդ արտադրանքի թափոնները)՝ դրանում ճառագայթման առկայությամբ պայմանավորված վտանգների դասակարգման, մակնշման և դրանց մասին տեղեկացման մասով:
6. Սննդամթերք, այդ թվում՝ սննդի կենսաբանորեն ակտիվ հավելանյութեր

և սննդային հավելումներ, ինչպես նաև կենդանիների համար պատրաստի կերեր:

7. Արտադրանք արտադրատեսակների կազմում, որը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում շրջանառության ընթացքում չի փոփոխում իր քիմիական բաղադրությունը և ագրեգատային վիճակը, ենթարկված չէ կազմալուծման և օքսիդացման պրոցեսներին, չի առաջացնում փոշի, գոլորշի և կախույթներ, որոնք մարդու կյանքին և առողջությանը, կենդանիների և բույսերի կյանքին և առողջությանը, շրջակա միջավայրին, գույքին վտանգ ներկայացնող քիմիական նյութեր են պարունակում:

8. Քիմիական արտադրանքի արտադրության և սպառման թափոնները, եթե դրանք ենթակա են օգտահանման (վերամշակման):

9. Քիմիական արտադրանք, որի վրա տարածվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով մաքսային տարանցման ընթացակարգի գործողությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

«Քիմիական արտադրանքի
անվտանգության մասին»

Եվրասիական տնտեսական միության
տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 041/2017)

Քիմիական արտադրանքի բաղադրության մեջ վտանգավոր քիմիական նյութերի
պարունակության թույլատրելի շեղումները

Քիմիական արտադրանքի բաղադրության մեջ վտանգավոր քիմիական նյութի սկզբնական պարունակությունը (C), %	Թույլատրելի շեղումները, %
1	2
$C \leq 2,5$	± 30
$2,5 < C \leq 10$	± 20
$10 < C \leq 25$	± 10
$25 < C \leq 100$	± 5

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«Քիմիական արտադրանքի

անվտանգության մասին»

Եվրասիական տնտեսական միության

տեխնիկական կանոնակարգի

(ԵԱՏՄ ՏԿ 041/2017)

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

քիմիական անվտանգության մասին հաշվետվության

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

(Ա. Ա. Հ., հայտատուի պաշտոնը)

«___» _____ 20___թ.

Կ.Տ.

I. Ընդհանուր տեղեկություններ

1. Հայտատուի (քիմիական արտադրանք արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի) վավերապայմանները (անվանումը (ազգանուն, անուն, հայրանուն) և գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն), պետական գրանցման համարները, բանկային և փոստային վավերապայմանները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն):

2. Տեղեկություններ՝ քիմիական արտադրանքի մասին (անվանում, բաղադրակազմ, CAS համարը (առկայության դեպքում)), դրա արտադրության և օգտագործման մասին:

3. Դասակարգում և մակնշում:

4. Անվտանգ օգտագործման ձեռնարկ:

5. Ֆիզիկաքիմիական, թունագիտական և էկոտոթունագիտական հատկությունների հետազոտությունների արդյունքներ:

6. Լրացուցիչ թեստավորման մասով առաջարկություններ:

7. Մարդու կյանքի և առողջության, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության, շրջակա միջավայրի, գույքի նկատմամբ վտանգավորության մասին տեղեկություններ:

8. Որպես գրանցվող քիմիական արտադրանքի այլընտրանքային բաղադրիչներ՝ անվտանգ քիմիական նյութերի օգտագործման հնարավորության գնահատում:

II. Վտանգավորության գնահատում

1. Առողջության համար վտանգավորության գնահատում:

2. Պայթյունահրդեհավտանգության գնահատում:

3. Շրջակա միջավայրի համար վտանգավորության գնահատում:

4. Կայունության, կենսակուտակման ունակության և թունավորության գնահատում:

5. Ներգործության գնահատում (վտանգավոր և (կամ) կայուն, կենսակուտակման ունակ և թունավոր քիմիական նյութերի համար):

6. Ներգործության սցենարներ (վտանգավոր և (կամ) կայուն, կենսակուտակման ունակ և թունավոր քիմիական նյութերի համար):

7. Ռիսկի բնութագիր (վտանգավոր և (կամ) կայուն, կենսակուտակման ունակ և թունավոր քիմիական նյութերի համար):

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

«Քիմիական արտադրանքի
անվտանգության մասին»

Եվրասիական տնտեսական միության
տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 041/2017)

Քիմիական արտադրանքի բաղադրության մեջ կիրառման համար
սահմանափակված քիմիական նյութերի սահմանային պարունակությունը

Քիմիական նյութերի վտանգավորության տեսակները	Կոնցենտրացիա (C), % (կշռային)
1	2
Քաղցկեղածիններ (1-ին և 2-րդ դասեր)	0,1
Մուտագեններ (1-ին դաս)	0,1
Մուտագեններ (2-րդ դաս)	1
Վերարտադրողական ֆունկցիայի վրա ներգործող (1-ին և 2-րդ դասեր)	0,1
Ջրային միջավայրի համար քրոնիկ թունավորություն ունեցող (1-ին դաս)	1

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«Քիմիական արտադրանքի
անվտանգության մասին»

Եվրասիական տնտեսական միության
տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 041/2017)

(ձև)

ՀԱՅՏ

քիմիական արտադրանքի* պետական գրանցում անցկացնելու մասին

(ծանուցողական կամ թույլատրական. նշել անհրաժեշտը)

«__» _____ 20__ թ. N _____

(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության
լիազորված մարմնի անվանումը)

_____ ից
(հայտատու - իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը (իրավաբանական անձի
հասցեն) կամ հայտատու- անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.Հ.-ն և գտնվելու վայրը)

(հայտատուի անվանումը (Ա. Ա. Հ.-ն) և գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն), եթե
հայտատուն և արտադրողը միևնույն անձը չեն)

_____ (պետական գրանցման համարը)

(բանկային, փոստային վավերապայմանները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

* Հայտը ձևակերպվում է հայտատուի ձևաթղթի վրա:

Խնդրում եմ կատարել գրանցում՝

(քիմիական արտադրանքի անվանումը՝ նշելով առևտրային (ֆիրմային) անվանումը (առկայության դեպքում) և դրա նշանակությունը (կիրառման ոլորտը))

Հայտին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

Հայտատու՝

(ստորագրությունը)

(Ա.Ա.Հ.-ն)

Լրացվում է լիազորված մարմնի մասնագետի կողմից

Հայտն ընդունվել է «___» _____ 20___ թ., գրանցվել է № ___ ներքո

Հայտն ընդունած աշխատակիցը՝

(պաշտոնը)

(ստորագրությունը)

(Ա.Ա.Հ.-ն)

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«Քիմիական արտադրանքի
անվտանգության մասին»
Եվրասիական տնտեսական միության
տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 041/2017)

(ձև)

ՎԿԱՅԱԿԱՆ

քիմիական արտադրանքի ծանուցողական
պետական գրանցման մասին

N _____ առ «___» _____ 20___ թ.

Գործողության ժամկետը՝ մշտական

(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմնի
անվանումը)

Սույն վկայականը տրվել է

(տեղեկություններ՝ իրավաբանական անձի պետական գրանցման մասին, կամ որպես
անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի Ա.Ա.Հ.-ն, այդ թվում՝
իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն)՝ իրավաբանական անձի համար, կամ
գտնվելու վայրը՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար. նշել
անհրաժեշտը, հեռախոսահամարը և ֆաքսի համարը, Էլեկտրոնային փոստի հասցեն)

որը

(քիմիական արտադրանք արտադրողն է (արտադրողի լիազորված անձն է), ներմուծողն է.
նշել անհրաժեշտը)

(քիմիական արտադրանքի անվանումը)

Նշված քիմիական արտադրանքը համապատասխանում է «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 041/2017) պահանջներին, և դրա մասին տեղեկությունները ներմուծվել են Եվրասիական տնտեսական միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստր՝ № _____ ներքո:

Քիմիական արտադրանքի նշանակությունը (օգտագործման ոլորտը, օգտագործման սահմանափակումը)՝ _____

(Եվրասիական տնտեսական միության (ստորագրություն
անդամ պետության լիազորված մարմնի
պաշտոնատար անձի պաշտոնը)

(Ա.Ա.Յ.-ն)

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«Քիմիական արտադրանքի
անվտանգության մասին»

Եվրասիական տնտեսական միության
տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 041/2017)

(ձև)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

քիմիական արտադրանքի օգտագործման մասով

N _____ առ « ____ » _____ 20__ թ.

Գործում է մինչև « ____ » _____ 20__ թ.

(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմնի
անվանումը)

Սույն թույլտվությունը տրվել է

(տեղեկություններ՝ իրավաբանական անձի պետական գրանցման մասին, կամ որպես
անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի Ա.Ա.Հ-ն., այդ թվում՝
իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն)՝ իրավաբանական անձի համար, կամ
գտնվելու վայրը՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար.
նշել անհրաժեշտը, հեռախոսահամարը և ֆաքսի համարը, Էլեկտրոնային փոստի
հասցեն)

որը

(քիմիական արտադրանք արտադրողն է (արտադրողի լիազորված անձն է),
ներմուծողն է. նշել անհրաժեշտը)

(քիմիական արտադրանքի անվանումը)

«Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական
միության տեխնիկական կանոնակարգին (ԵԱՏՄ ՏԿ 041/2017) համապատասխան
նշված քիմիական արտադրանքը թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության
մաքսային տարածքում շրջանառության, և դրա մասին տեղեկությունները ներմուծվել
են Եվրասիական տնտեսական միության՝ քիմիական նյութերի և խառնուրդների
ռեեստր՝ № _____ ներքո:

Քիմիական արտադրանքի նշանակությունը (օգտագործման ոլորտը, օգտագործման
սահմանափակումը)՝

(Եվրասիական տնտեսական միության
անդամ պետության լիազորված մարմնի
պաշտոնատար անձի պաշտոնը)

(ստորագրություն
նը)

(Ա.Ա.Յ.-ն)

Կ.Տ.